

ՆՅՈՒԹԵՐ Զ. ԱԳՈՒԼԵՑՈՒ «ՕՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԵՎ Ա. ԵՐԵՎԱՆՑՈՒ
«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՊԱՏԵՐԱԶՄԱՅՆ» ԳՐԳԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1938 թ. աշնանը ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի հրատարակութ-
յամբ լույս տեսան երկու գիրք՝ Զաքարիա Ազուլեցու «Օրագրությունը» և Արրահամ Երևանցու
«Պատմություն պատերազմացն»։ Երկու գրքի վրա էլ նշված էր միմիայն խմբագրի՝ Ս. Տեր-Ավե-
տիսյանի անունը, բայց հասկանալիորեն ոչինչ չէր ասված այս հուշարձանների արժեքավորող,
բնագրերը պատրաստող և ծանոթագրող Թադևոս Ավդալբեգյանի մասին։

Պատմական ուշադրավ այս աղբյուրներով դրադվող գիտնականների տարակուսանքներին
ու հարցասիրությանը բավարարություն տալու և պատմական ճշմարտությունը վերականգնելու
նպատակով հրապարակում ենք մի շարք փաստաթղթեր, որ պահպանվել են Թ. Ավդալբեգյանի
արխիվում։

Հրապարակվող փաստաթղթերից բացի Ավդալբեգյանի արխիվում պահպանված են.

ա) Զաքարիա Ազուլեցու «Օրագրության» քննական բնագրի ձեռագիրը։

բ) Արրահամ Երևանցու «Պատմություն պատերազմացն» հուշարձանի քննական ձեռագիրը։

գ) Զաքարիա Ազուլեցու «Օրագրության» բոլոր տպագրված մամուլներն ընտիր թղթի վրա։

դ) Արրահամ Երևանցու «Պատմություն պատերազմացն» գրքի սրբագրական մամուլներին
66—100 էջերը Ավդալբեգյանի մակագրությամբ՝

«Մաքրեցեք և տպագրության տվեք»։

Տպագրված գրքերի ու արխիվում պահպանված մամուլների համեմատությունը միանգա-
մայն պարզ է դարձնում դրանց բացարձակ նույնությունը։ Տարբերություն կա միայն Ազու-
լեցու «Օրագրության» երկու կետում։ Առաջին. Ավդալբեգյանի օրինակում չկա տպագրվածի
առաջին մամուլը՝ Տիտղոսաթերթի ու «Առաջաբանի տեղը»։ Երկրորդ. Ավդալբեգյանի օրինակն
ունի հավելյալ մամուլ, որ չկա տպագրվածում։ Եա ստորև հրապարակվող «Ծանոթագրու-
թյուններին» պրակն է Ազուլեցու, նրա «Դավթարի», ձեռագրի վիճակի և հարակից խնդիրների
մասին։

Բաճապիր. գիտ. դոկտոր Մ. Թ. ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ

Փ Ա Ս Տ Ա Թ Ղ Թ Ե Ր

№ 1

Պայմանագիր

Մենք ներքևում ստորագրողներս, մի կողմից Գիտությունների Համա-
միութենական Ակադեմիայի Հայաստանի ֆիլիալի փոխ-նախագահ ընկեր
Ալեքսանդր Մելիքը, որ պայմանագրումս կրճատ անվանվում է «Հայֆիլիալ»,
ու մյուս կողմից գիտական աշխատավոր Թադևոս Հայրապետի Ավդալբեգ-
յանը, որ պայմանագրումս կրճատ անվանվում է «Ավդալբեգյան», 1935 թվա-
կանին ապրիլի 25-ին Երևան քաղաքում կնքեցինք այս պայմանագիրը հե-
տևյալ կետերով...

Ավդալբեգյանը պարտավորվում է.

I. Այս պայմանագիրն ստորագրելուց անմիջապես հետո Հայֆիլիալին
հաճոճելու XVII դարի մատենագիր վաճառական Զաքարիա Ազուլեցու «Օրա-

գրութեան» գիտական բնագիրը, որ պատրաստել է ինքն՝ Ավդալբեգյանը՝ տպագրութեան պատրաստ վիճակում հրատարակութեան հանձնելու համար:

№ 2

Գիտութեանների Համաժողովենական Ակադեմիայի Հայաստանի ֆիլիալի գիտական աշխատակից ընկ. Թադևոս Ավդալբեգյանին.

Ստանալով Ձեր ս/թ. նոյեմբերի 28-ի գրութիւնը՝ ֆիլիալս տալիս է յուր սկզբունքային համաձայնութիւնը և առաջարկում է Ձեզ, որ Դուք տպագրութեան համար պատրաստեք «Աբրահամ Երևանցու «Պատմութիւն պատերազմացն» աշխատութիւնը՝ մեր կողմից 1936 թվականին լույս ընծայելու համար:

Տպագրութեան պատրաստ գիտական բնագիրը պետք է ներկայացնեք 1936 թ. հունվարի վերջին. հարադրութիւնները՝ բնագրի տպագրվելուն զուգընթաց:

Գիտութեանների ակադեմիայի Հայկ. ֆիլիալի փոխ. նախագահ՝ Մելիք.

28—11—1935 թ.

Հայաստանի Ազգային
ՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԵՅ

Երևան-Երևան և Երևան-Երևան

Երևան-Երևան

— ՈՐԱ ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ —

1936

№ 3

Ընկ. Թադևոս Ավդալբեգյանին.

Քանի որ Հայֆիլիալի ղեկավարութիւնը որոշել է շտապեցնել Զաքարիա Ազուլեցու «Օրագրութիւն» երկի հրատարակութիւնը ակադ. Հ. Ա. Օրբելու խմբագրութեամբ, ուստի խնդրում ենք մինչև փետրվարի 1-ը ավարտել և հանձնել այս հրատարակութեանը վերաբերող մնացած նյութերը: Այս պատճառով Աբրահամ Երևանցու «Պատմութիւն պատերազմացն» գրքին վերաբերող նյութերի հանձնման ժամկետը հետաձգվում է մինչև ս/թ. փետրվարի 15-ը: 15 Հանդես, № 1

№ 4

Ստացա ընկ. Թադևոս Ավդալբեդյանից Ջաքարիա Ադուլեցու «Օրագրության» ցանկերը... Յանկերը հանձնված են տպագրության պատրաստ վիճակում:

Գիտ. ազ. Հայֆիլիալի սեկտորի վարիչի տեղակալ՝ Բ. Հաբուքյունյան

4 փետրվար. 1937
Երևան

№ 5

1937 թ. հունվարի 31-ին, Երևան

Ջաքարիա Ադուլեցու «Առաջաբան», որ գրել եմ Օրբելու համար:

Հանրահայտնի իրողություն է, որ հայ մատենագիրները կարևոր աղբյուր են Մերձավոր Արևելքի հին ու մանավանդ միջնադարյան պատմության համար: Առանց չափազանցության կարելի է ասել՝ հայ մատենագիրները մեծ արժողություն են ներկայացնում հարևան երկրների՝ Տաճկաստանի, Պարսկաստանի, Վրաստանի, Ատրպատականի և այլոց՝ նաև նոր պատմության տեսակետից:


Չնայած հայ պատմական աղբյուրների այս խոշոր կշռին, դժբախտաբար հայ մատենագիրները, սրանց շարքում մանավանդ պատմագիրները, սակավ բացառությամբ, մինչև հիմա չունեն իրենց դիտական հրատարակությունները:

Այս դրույթը հատկապես ճիշտ է հայ նորագարյան պատմիչների նկատմամբ, որոնք առհասարակ չեն արժանացել դիտական հրատարակության: Այսքանը դեռ քիչ է: Կան մի շարք նորագարյան պատմիչներ, որոնք մինչև օրս էլ ձեռագրական պահեստանոցներում ընկած ննջում են՝ առանց լույս տեսնելու բախտին արժանանալու:

Պատմագիտության ու մանավանդ արևելագիտության շահերի տեսակետից այս վիճակն այլ ևս անհանդուրժելի համարելով՝ Գիտությունների Ակադեմիայի Հայաստանի ֆիլիալը ձեռնարկել է «Հայ մատենագիրների» գիտական հրատարակությունների սերիային, սկսելով մոտից՝ նորագարյան պատմիչներից ու աղբյուրներից: Սրանց միջից նա առաջին հերթին առավելություն է տալիս նրանց, որոնք ավելի շատ են բովանդակում 1) Տնտեսական հարաբերությունների վերաբերող տվյալներ ու 2) Մերձավոր Արևելքի ժողովուրդների ընդհանուր կյանքը պատկերող էջեր՝ դուրս գալով տեղական նեղ շրջանակներից:

Այս նպատակադրումների տեսակետից բացառիկ շահադրույթություն ունի 1/-րդ դարի հայ խոշոր առևտրական Ջաքարիա Ադուլեցու «Օրագրությունը», որը նույնիսկ հաշերեն լեզվով առաջին անգամն է լույս տեսնում ու այն էլ դիտական հրատարակությամբ: Ոչ միայն հիշյալ դարի, այլև առհասարակ հայ պատմագրական գրականության մեջ այս «Օրագրությունը» հայ ու հարեւման ժողովուրդների տնտեսական-կուլտուրական-քաղաքական-կենցաղային երևույթներին վերաբերող նմանը չունի յուր հակիրճ, ստույգ ու բաղձալից մանի տեղեկությունների պաշարով: Եթե սրա վրա ավելացնենք, որ Ադուլեցին առաջին հայ հեղինակն է, որ մի ամբողջական ինքնուրույն, ոչ թարգմանական աշխատություն գրել է արևելահայ աշխարհարարով, ապա հասկանալի կլինի հրատարակվող այս աղբյուրի կարևորությունն ընդհանրապես:

Ցանկանալով Ազուլեցու «Օրագրությունը» ըստ կարելիության շուտ տրամադրելի դարձնել ուսումնասիրողներին ու ընթերցողներին՝ Հայֆիլիալը նպատակահարմար գտավ առ այժմ հրատարակել «Օրագրության» գիտական բնագիրն ու ձեռնարկները միայն, որ կաղմել ու հարագրել է Հայֆիլիալի գիտական աշխատակից ընկ. Թադևոս Ավդալբեգյանը։ Իսկ Ազուլեցու կյանքին,



դարաշրջանին, լեզվին ու «Օրագրության» առանձին կետերին վերաբերող ուսումնասիրություններն ու ընդարձակ ծանոթագրությունները թողնում ենք առանձին հատորի, որին հետագայում կարող են մասնակցել զանազան մասնագետներ ըստ ցանկության ու ըստ հրավերի։

Նկատի ունենալով Զաքարիա Ազուլեցու «Օրագրության» մեծ կարևորությունը Մերձավոր Արևելքի ժողովուրդների տնտեսական-կուլտուրական-քաղաքական զարգացման պատմության համար՝ Գիտությունների Համամիութենական Ակադեմիայի Հայաստանի ֆիլիալը պատրաստում է հիշյալ «Օրագրության» ռուսերեն թարգմանության գիտական հրատարակությունն էլ, որը լույս է տեսնելու մոտիկ ապագայում։

Թ Ա Գ. Ա Վ Դ Ա Լ Բ Ե Գ Յ Ա Ն

Ծ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր

ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ

I. Համանուն Ազուլեցիներ։ II. Մենդյան ու մահվան թվականները։ III. Հիշատակություններ ու քաղվածքներ։ IV. Տպագրության փորձ։ V. Ունիկոմ Տպագիրը։ VI. Փնահատության աճումը։ VII. Տպագիրն ու նրա բնագիրը։ VIII. Ազուլեցու «Դավտարը»։ IX. Կողմնակի հավելագրություններ։ X. «Դավտարը» 1664 թվականին։ XI. «Դավտարը» 1681—1691 թվականներին։ XII. Նոր կարգի խոտորումներ։ XIII. «Դավտարն», ինչպես որ կա։ XIV. Այս հրատարակության բնագիրը։ XV. Հրացուցիչ տեղեկություններ։

Վ Ծանոթագրությունների առաջին մասը վերաբերում է Զաքարիա Ազուլեցու «Օրագրության» իսկագրին ու բնագիրը կաղմելուն, երկրորդ մասը՝ բնագրի տարբեր կետերին ըստ էության։

I. Համանուն Ազուլեցիներ: «Օրագրության» հեղինակը կոչվում է Ջաքարիա Ազուլեցի, որ XVII դարի մարդ է, վաճառական կամ խոջա: Նույն դարում հիշատակված է «Ազուլեցի խոջայ Ջաֆարիաս, որ էառ... զսուրբ տետարանս... և ետուր յիշատակ ի դուռն Ազուլիսի սուրբ Յովանէս Մկրտիչ եկեղեցոյ... Արդ գրեցաւ... ի Կոստանդինուպօլիս, ի թուարերութեան Հայոց մեծաց ՌՃ և ԺԵ-ն» [= 1666 թ.]: Անունը, ծննդավայրն, զբաղմունքն ու թվականը հարմար են գալիս «Օրագրության» հեղինակին, բայց այս նույնացումը հիմա այլևս անհնարին է. Կոստանդնուպոլսի ավետարանը նվիրող խոճա Ջաքարիայի հայրը կոչվում է Շեխ, մայրը՝ Սուլթան-ձան, այն ինչ, ինչպես «Օրագրությունն» է հիշում, մատենագիր Ջաքարիայի հոր անունն Աղամիր է, մորը՝ Սավգյուլ. տարբեր են երկսի մյուս հարազատների անուններն էլ:

Ինչքան որոշակի դատվում են այս երկու գողթնեցին, այնքան անորոշ է հարցը համանուն երրորդի, որի մասին հիշատակում է Ալիշանը. «Այս ԺՋ դարուս մեջ ծաղկած են... Ջաֆարիա Ազուլեցի... Հովնաթան Նաղաշ...» և այլն²: Թվում է, թե այստեղ տարակուսելի կետ չկա, քանի որ տաղասաց Ջաքարիա Ազուլեցին XVI դարի մարդ է, այնինչ «Օրագրության» հեղինակը՝ XVII դարի: Բայց որովհետև Ալիշանը Նաղաշին էլ է հետ տանում XVI դար, որ աշկարա սխալ է, ուստի կասկածելի է դառնում տաղասաց Ազուլեցուն էլ նույն դարում գնելը: Սրանով բաց է մնում հարցը, թե ինչ առնչություն կա տաղասացի ու մյուս Ազուլեցիների, ուրեմն և Օրագրողի միջև:

II. Մենզյան ու մահվան թվականները: Օրագրող Ջաքարիայի ծնվելու թվականը հայտնի է. նա ծնվել է հայոց 1079 թվականին «սուրբ Գևորգի կիրակի օրն, կես օրեն հետն» («Օրագրություն», էջ 5), այսինքն՝ 1630-ի սեպտ. 26-ին (ն. տ. հոկտ. 6-ին), ցերեկվա ժամի 12-ի ու երեկոյան 6-ի արանքում: Կարծեք, կովան կա նրա մահվան էլ թվականը որոշելու համար: Հայ ազգագրության բազմերախտ մշակ Լալայանը բերում է Վերին Ազուլիսի երկու տապանագիր.

1. «Այս է տապան մզկաթի Ամիրի որդի Ջաքարին. թիւ ՌՃԼԹ»:

2. «Այս է տապան Մզկաթի Աղամիրին կողակից Ասլի Գիւլին, թ. ՌՃԺԶ»³:

Առաջին տապանագրի մասին Լալայանը ծանոթագրել է, որ թերևս սա է «Օրագրության» հեղինակ Ջաքարիա Ազուլեցին: Մի փոքրիկ ուղղումով տապանագիրը հարմար է գալիս Օրագրողին. գուցե Լալայանը, որ վիճարձանագրեր վերարտադրելում ուժեղ չէր, սխալ ընթերցման հետևանքով է Ազուլեցու հոր Աղամիր անունը դարձրել Ամիր: Ինչ վերաբերում է սրա մզկաթի լինելուն, այս մի քանի անգամ է շեշտել Օրագրողը («Օրագրություն», էջ 24, 80, 90 և այլն): Երկրորդ տապանագրում արդեն բոլորովին ճիշտ է գրված Ջաքարիայի հոր անունը. այստեղ մզկաթու կնոջ Ասլի Գիւլ անունն էլ մի թեթև սրբագրությամբ նույնանում է Ջաքարիայի մոր Սավգյուլ անվան հետ: Այս շտկումներով կունենանք՝

1. Այս է տապան մզկաթի Աղամիրի որդի Ջաքարին. թիւ ՌՃԼԹ [= 1690]:

2. Այս է տապան մզկաթի Աղամիրի կողակից Սավգիւլին. թ. ՌՃԺԶ [= 1677]:

Սրանից կհետևի, որ Օրագրողը թաղված է յուր մոր կողքին, ընտանեկան շիրմանոցում: Բայց մեջտեղ է գալիս մի նոր դժվարություն. տապանագիրը Ջաքարիայի մահը դնում է 1690-ին, այնինչ «Օրագրության» ամենավերջին տողից երևում է, որ Ազուլեցին դեռ կենդանի էր հայոց 1140 = 1691 թվականին և նույն տարվա մայիսի 5-ին արձանագրել է, թե «Թնձ Ջաքարիս աղլիկ ելաւ. անունն Վառվառէ»: Այսպիսով անհնարին է Օրագրողի մահը 1691-ի մայիսի 5-ից առաջ դնել: Ստացվում է երկընտրանք. կամ առաջին տապանագրի թվականը ճիշտ է և ուրեմն «Օրագրության» հեղինակին չի վերաբերում, կամ էլ գերեզմանն իսկապես Ջաքարիա Ազուլեցունն է, բայց թվականը սխալ է արտագրված: Ես հակված եմ այս երկրորդ դրույթի կողմը: Հուսանք, որ հնագիտական մի զիտարշավ տեղում կսպարդի Օրագրողի կենսագրության համար կարևոր այս կետը:

III. Հիշատակություններ ու բաղվածքներ: Ազուլեցու մասին առաջին հիշատակությունը մեր գրականության մեջ արվում է XIX դարի երկրորդ կեսին: 1862 թվականին «Ճոռաղի» մի

² Երվանդ Լալայան, «Յուրակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի», Ապրակ, Թիֆլիս, 1915, էջ 923—924:

³ Վեռնիկ Ալիշան, «Յուշիկը հայրենեաց հայոց», Բհատոր, Վենետիկ, 1870, էջ 125: Ալիշանի այս հատվածի վրա ուշադրություն հրավիրել է իմ ուսուցիչը—վաստակավոր բանասեր Ստեփան Կանայանցը:

⁴ «Ազգագրական հանդես», XII, Թիֆլիս, 1904, էջ 149—150:

աշխատակից—Իսրայել Մամիկոնյանը, որն Ազուլիսում եղել էր 1861-ին,—«Տոնակատարություն Ազուլյաց» վերնագրով հոդվածում արդեն խոսում է Օրագրողի ու սրա երկի մասին. «Ջաբարայ անունով մարդ Ազուլեցի, յուր համար կենսագրություն անելով, թողել է յուր մահվան հետո մի գրչյա գրքույկ»⁵։ Մամիկոնյանը մինչև անգամ երկու քաղվածք է բերում «Օրագրությունից» բառացի՝ Նրա քաղվածքները համեմատելով մեր այս հրատարակության համապատասխան հատվածների հետ՝ տեսնում ենք, որ հոդվածագիրը ձեռքի տակ իսկապես ունեցել է Ազուլեցու ձեռագիրը և քաղվածքներն արել է անմիջաբար նրանից։ Ափսոս, նա չի հայտնում, թե ում մոտ էր գտնվում այն ժամանակ «Օրագրությունը», կամ թե ումնից էր ստացել քաղվածքներ անելու համար⁶։

Երկրորդ անձը, որ օգտվել է Ազուլեցու ձեռագրից անմիջաբար՝ քսանից ավելի քաղվածքներ մեջ բերելով, Մեսրոբ Սմբատյանն է։ Սա Դոդթնում եղել է 1897—1904 թվականներին, ծանոթացել ձեռագրին, հատվածներ է արտագրել՝ ամեն անգամ որոշակի նշելով «Դավտարի» էջերը։ Օրագրողին նա անվանում է «Ջաբարիայ վաճառական Աբուլեցի», իսկ ձեռագրի մասին գրում է. «Օրագրական գիրք Աբուլեցի վաճառական Ջաբարիայի Աղամիրյան, գրեալ ի թուին ՌՃԺ (1861) յԱզուլիս, որ պատմե յուր ժամանակի անցքերը և յուր ճանապարհորդությունն ղեպի Եվրոպայի քաղաքներն և ղեպի Պարսկաստան»⁷։ Վերջում նա տալիս է մի կարևոր տեղեկություն, թե՛ «Դիրքս Ավետիս քահանայի Ներքին Ազուլեաց էր, ապա մնաց առ Վերին Ազուլյաց տանուտէր՝ Յովհաննէսն Կոստանդինյալնից»⁸։

IV. Տպագրության փորձ։ XIX դարի վերջում Ազուլեցու «Օրագրությունը» մտնում է մի նոր փուլի մեջ։ Ձեռագիր «Դավտարն» ընկնում է «Մշակ»-ի խմբագիր Ալեքսանդր Քալանթարի ձեռքը, որը սրանից մոտ 40 տարի առաջ տպագրության է հանձնում այն։ Դեռ 1901 թվականին Լեոն գրել է այս մասին. «Ջաբարիայի այս գրվածքը արդեն տպագրել է տվել «Մշակի խմբագիր պ. Ա. Քալանթար, որը և շուտով լույս կհանն նրան»⁹։ Լալայանը 1904 թվականին յուր «Դոդթն» աշխատության առաջաբանում աղբյուրները թվարկելիս հավաստել է. «Հաջորդիա Ազուլեցու Օրագրությունը, ժէ դարում գրված այս հիշատակարանը այժմ տպագրում է պ. Ա. Քալանթար, որ հաճեց սրբագրության թերթերը տալ ինձ օգտվելու»⁹։ Բուն աշխատության մեջ նա ավետում է. «Ջաբարիայի այս օրագրությունը կամ «Դավթարը» (ինչպես ինքն է ասում) արդեն տպագրել է տվել պ. Աղ. Քալանթարը և շուտով լույս կընծայեն»¹⁰։ Թե՛ Լեոն ու թե՛ Լալայանը նույն իսկ քաղվածքներ են բերում Քալանթարի հրատարակությունից՝ տպագրի էջերը նշելով¹¹։

Տպագրության փաստն անվիճելի է, բայց իրողություն է այն էլ, որ հրատարակությունը չկա մեջտեղում։ Ի՞նչ գաղտնիք է այս։ Խորհրդավոր հրատարակության վրայից բոլոր բարձրացնում է դարձյալ Լեոն. «Այս թանկագին հիշատակարանը,— գրում է նա երեսուն տարի անց,— հրատարակել էր գյուղատնտես Ալեքսանդր Քալանթարը, բայց բոլոր տպագրած թերթերը կորել են տպարանում, և միայն մի հատ օրինակ մնացել էր ինձ իրրե ընծա Քալանթարից»¹²։

Անհավատալի է, որ տպարանում կորչեն մի ամբողջ գրքի մամուլների տպագրած բոլոր թերթերն անխտիր, ուստի Լեոյի ասածը մի տեսակ լավասություն է թվում։ Այս կասկածին ուժ է տալիս մեր գրական շրջաններում պատվող այն լուրը, թե Ազուլեցու «Օրագրության» տպված թերթերը տպարանում այնքան երկար են սպասել զրասեր պատվիրատուի գալուստին, որ զայրացած տպարանատերը հաշվեհարդարի ամեն լույս կորցրած՝ «թանկագին հիշատակարանը» փթով ծախել է իբրև փաթիլոցելու հասարակ թուղթ...

5 «Ճոռարաղ» ամսագիր, ՌՅԺԱ—1862, Մոսկվա, էջ 87—88։

6 Ազուլեցու ձեռագրի 297 էջի X հավելագրության մեջ կարդում ենք. «...Ազուլեցի, Խաչատուր Յովհաննէսեան Քալանթարեանց, 1860 այմի»։

7 Մ Ե Ս Ր Ո Վ Բ ար ք. Ս մ ր ա տ յ ա ն, «Նկարագիր Երնջակայ և շրջակայից նորա»։ Տփլիս, 1904, էջ 207—213։

8 Լ Ե Ո, Հայկական տպագրություն, Ա հատոր, Թիֆլիս, 1901, էջ 295։

9 «Աղագրական հանդես», XI, Թիֆլիս, 1904, էջ 242։

10 Նույնը, էջ 272։

11 Լ Ե Ո, Հայկ. տպագր., Ա հատոր, I տպ., 1901, էջ 445—446 ու (II տպ., Թիֆլիս, 1904, էջ 529) և Ի. Լալայան, Աղգ. հանդես, նույն գիրք, էջ 303 ու 310։

12 Լ Ե Ո, Խոջայական կապիտալ, Ա հատոր, Երևան, 1934, էջ 68—69։

V. Ունիկում Տպագիրը: Զաքարիա Ազուլեցու «Օրագրություն» հաղորդած պատմական տեղեկությունների կարևորությունն ինձ հարկադրել էր «Անհատ աղանդավորներ» աշխատությանս մեջ օգտվելու Սմբատյանի քաղվածքներից¹³։ Նույն այս հանդամանքն էր ստիպել ընկ. Աշոտ Հովհաննիսյանին, որ սա Քալանթարի տպագրից տասնյակ տարի հետո յուր գերմաներեն աշխատության մեջ քաղվածք անի Լեոյի քաղվածքից¹⁴։ Միջնորդական աղբյուրներին դիմելու պատճառն այն էր ի հարկն, որ տպագիրը կամ ավելի ճիշտ՝ սրա ունիկում օրինակը մատչելի չէր գրողներին ու դիտնականներին։ Տպագիրն ստացել էր հազվագյուտ ձեռագրի նշանակություն, որից հետագայում օգտվել կարողացել են մի երկու հոգի միայն։ Այսպես, 1915 թվականին ընկ. Աշ. Հովհաննիսյանն արդեն հնարավորություն է ստանում քաղվածքներ անելու տպագիր ունիկումից՝ ծանոթագրելով. «Ժէ դարի ցարդ չհրատարակված ժամանակագրողի այս գործը սիրալիր կերպով մեր տրամադրության տակ դրեց պ. Լեոն»¹⁵։

Հայաստանի խորհրդայնացումից հետո Տպագիրը բերվում է Երևան և այստեղ աղբյուր է ծառայում նոր, բայց էլի շատ սուկավաթիվ ուսումնասիրողներին։ Այս շրջանում նրանից բավական օգտվել է մեզվաջան հետախույզ ընկեր Երվանդ Շահադիդը «Հին Երևանը» աշխատության մեջ¹⁶։ Ամենավերջին հրատարակությունը, որում էլի ընդարձակ քաղվածքներ են բերված Տպագրից, Լեոյի վերոհիշյալ մահամնա հատորն է խոջայական կապիտալի մասին։ Այստեղ է նաև, որ Լեոն հարկ է համարում ունիկում Տպագրի մասին արձանագրել, թե «այդ օրինակը այժմ ընկ. Աշոտ Հովհաննիսյանի մոտ է»¹⁷։

VI. Գնահատության անումը: Տեսանք, որ մինչև հիմա Զաքարիա Ազուլեցուն հիշել ու նրա «Օրագրությունից» ուղղակի կամ թե միջնորդաբար օգտվել են Իսրայել Մամիկոնյանը, Մեսրոպ Սմբատյանը, Լեոն, Երվանդ Լալայանը, Աշոտ Հովհաննիսյանը, տողերիս հեղինակն ու Երվանդ Շահադիդը։ Բայց սրանցից Օրագրողի ու նրա երկի բովանդակության ու նշանակության մասին ամենից ընդարձակ արտահայտվել է Լեոն։

«XVII դարի ազուլեցի վաճառականներից մեկը, — գրում էր նա 1901 թվականին, — ոմն Զաքարիա, թողել է մի շատ հետաքրքրական օրագրություն կամ, ինչպես ինքն է ասում, «գավթար», որից կարելի է շատ տեղեկություններ հանել ղոկերի վաճառականության մասին։ Այդտեղից մենք իմանում ենք, որ առևտրական գործերը տանում էին ազուլեցուն Սպահան, Թավրիզ, Թիֆլիս, Ջմյուռնիա, Բրուսա, Կ. Պոլիս, Լիվորնո, Վենետիկ, Ամստերդամ. իր ճանապարհորդությունների ժամանակ նա լինում էր Ֆրանսիայի, Սպանիայի, Պորտուգալիայի, Իտալիայի ծովափնյա քաղաքներում, մի խոսքով ծանոթ էր Եվրոպայի մի նշանավոր մասի հետ»։ «Այդ «գավթարի» մեջ Զաքարիան արձանագրել է այն ամենը, ինչ հետաքրքրական է համարել. այդտեղ են թե նրա առևտրական հաշիվները, թե առօրյա մանր գնալքերը, թե ժամանակակից պատմական անցքերը։ Շատ են այնպիսի մանրամասնություններ, որոնց մեջ երևան է գալիս հայ վաճառականը իր գործերով, իր ընտանեկան հանգամանքներով, տան սարք ու կարգով։ Հեղինակը չէ մոռացել արձանագրել նույն իսկ, թե ինչպես ինքը բաժանվեց իր եղբոր որդիներից, և ինչ շարժական և անշարժ կայք ստացավ ամեն մեկը. թվում է պղնձի ու արծաթի ամանները, նրանց արժողությունը։ Գրվածքը գրական արժանավորություններ չունի. դա գրադեստ վաճառականի մի վայրիվերո, տեղ-տեղ կրկնություններով մթնացրած շարագրություն է։ Կա այն նշանավոր հանդամանքը, որ գրվածքը աշխարհաբար լեզվով է և կարող է համարվել իրեն նմուշ այն աշխարհաբարի, որ գործ էին ածում հայերը այն ժամանակներում։ — Զաքարիայի այս գրվածքը արդեն տպագրել է տվել «Մշակի» խմբագիր պ. Ա. Քալանթար, որը և շուտով լույս կհանն նրան»¹⁸։

¹³ Թ ա դ. Ա վ դ ա լ Ր Ե գ յ ա ն, Անհատ աղանդավորներ հայոց մեջ XVI—XVII դարերում, Վիեննա, 1926, էջ 31։

¹⁴ Aschot Ioannissjan, „Israel Ory und die armenische Bebreiungsidee“, München, 1913, էջ 54—55։

¹⁵ «Արարատ», Վաղարշապատ, 1915, № 9—10 (Աշոտ Հովհաննիսյան, «Հակոբ Ջուղայեցու մի գրությունը ուսաց արբունիքին»), էջ 778։

¹⁶ Երվանդ Շահադիդ, «Հին Երևանը», Երևան, 1931, էջ 91, 127—129, 246 ու 252։

¹⁷ Լ Ե ռ, Խոջ. կապիտալ, Ա, 68—71։

¹⁸ Լ Ե ռ, Հայկ. տպագրություն, I տպագր., էջ 294—295, II տպ., էջ 391—392։ Այս երկրորդ տպագրության մեջ Լեոն գուրս է գցել վերջին «որը և շուտով լույս կհանն նրան» բառերը։ Ինչպես երևում է, նա 1904 թվականին արդեն կորցրել էր այդ հույսը՝ գուցե արդեն գիտակ լինելով տպարանում կատարված վանդալիզմին...

Նույնի մասին Հալայանը գրել է. «Սույն [ժէ] դարում մի ուրիշ վաճառական էլ Վերին Ազուլեցի, Զարարիա անունով, գրի է առել յուր հաշիվների հետ նաև ժամանակակից պատմական անցքերը, յուր ընտանեկան հանգամանքները, տան սառն ու կարգը, նույն իսկ յուր եղբայրներից լրամանվելու մանրամասնություններն ու յուրաքանչյուրի ստացած շաժական ու անշաժ կայքը, պղնձե և արծաթե ամանեղենները և սրանց արժեքը և այլն: Այս աշխատությունը բավական արժեք ունի թե՛ աղյագրական տեսակետից և թե՛ լեզվաբանական, որովհետև գրված է այն ժամանակվա աշխարհիկ, դրաբառախառն լեզվով: Զաֆարիայի այս օրագրությունը կամ «Դավարը» (ինչպես ինքն է ասում), արդեն տպագրել է տվել պ. Աղ. Քալանթարը և շուտով լույս կընծայե»¹⁹:

Իսկ Հալայանի դրածն, ինչպես ցույց են տալիս ընդդժումները, աղղված է Լեոյի հատվածից, այնուամենայնիվ աղղագրագետի կարծիքն ավելի դրական է, քան պատմաբանինը, որը բավական ստվերային կողմեր էլ է նշմարում «Օրագրության» մեջ: Տարիների թավալումը սակայն, յուր կնիքն է դնում Լեոյի աշխարհայացքի վրա, նա վերաքննում է յուր վերաբերմունքը նաև Ազուլեցու նկատմամբ և սրա աշխատությունն անվանելով «թանկագին հիշատակարան», առաջին տեղը նրան է տալիս հայ առևտրային կապիտալի պատմության աղբյուրների շարքում: «Առաջին և անզուգական աղբյուրն է մի հայ՝ խոջա Զարարիա անունով, որ ապրում էր 17-րդ դարում և որ... իր թողած վերին աստիճանի հետաքրքրական օրագրով պատկերացրել է իր ժամանակի վաճառականին ու վաճառականությունը մի աննման պարզությամբ»²⁰:

Հայ նշանավոր պատմաբանի կարապի երգն էր այս ու միաժամանակ, կարծես, կտակը, թե վերջապես անհրաժեշտ է գլորոցների խորքերից լույս աշխարհ հանել և ուսումնասիրող նոր սերնդի ձեռքը հանձնել պատմական այս հազվագյուտ երկը:

VII. Տպագիրն ու նրա բնագիրը: Տասներկու տարի առաջ էր, որ դրվեց Ազուլեցու «Օրագրությունը» նորից տպագրելու հարցը, և դրական որոշում ընդունվեց: Քանի որ Տպագրի տված բնագիրը բավարար չէր գիտական հրատարակության պահանջների տեսակետից, ուստի հարմար նկատվեց ոչ թե պարզապես վերահրատարակել ունիկում Տպագիրը, թեկուզ հարազրույթուններով (ներածություն, ցանկեր և այլն) ճոխացրած, այլ նոր ու գիտական բնագիր պատրաստել պաշտոնական համար: Նոր բնագիր կազմելու պարտականությունը դրվեց ինձ վրա, և ես 1924 թվականի գարնանը մեծ սիրով գործին կաշնելով ավարտեցի այն՝ տրամադրությանս տակ ունենալով թե՛ Ազուլեցու ինքնաձեռագիր «Դավտարն» ու թե՛ տարաբախտ Տպագիրը:

Նախ վերջինիս մասին:

Բանն այն է, որ Քալանթարի այս տպագրածը չի կարելի հրատարակություն անվանել: Նա ոչ թե պատրաստի գիրք է, այլ տպված մամուլների՝ հետո կազմել տված մի տետր, առանց գլխակարգության, առանց ցանկերի ու ծանոթագրությունների, առանց ներկայացնող որևէ առաջաբանի և նույնիսկ առանց անվանաթերթի (ТИТУЛЬНЫЙ ЛИСТ), որտեղ անշուշտ պիտի հիշված լիներ եթե ոչ լուսածողի անունը, դոնե հրատարակության վայրն ու թվականը: Անվանաթերթ չունենալու հետևանքով է անկասկած, որ ունիկում Տպագրից քաղվածքներ անելիս ոչ մի հեղինակ չի նշում տպագրության տեղն ու տարին:

Գալով Տպագրի տված բնագրին՝ նա ունի երեք թերություն: Առաջին. նրա մեջ բաղմամբիվ են սխալ ընթերցվածները: Ով ուզենա վերևում հիշված հեղինակների՝ Տպագրից վերցրած քաղվածքները համեմատել ներկա հրատարակության համապատասխան հատվածների հետ, հեշտությամբ կնկատի նրանց ու սրանց տարբերությունները: Երկրորդ. Տպագրում նյութի սխտեմատիկ դասավորություն չկա, այլ բնագիրը տրված է խառնակ վիճակում: Մասամբ այս է պատճառը, որ «Օրագրությունը» Լեոյին ներկայացել է իբրև «վայրիվերո, տեղ-տեղ կրկնություններով մթնացրած շարագրություն»: Վերջապես երրորդ ու գլխավոր թերությունն այն է, որ Տպագրի բնագիր պատրաստողը թույլ է տվել ընդարձակ կրճատումներ անել Ազուլեցու «Օրագրության» մեջ՝ վերջինս ներկայացնելով ոչ թե լրիվ ու իսկական կերպարանքով, այլ կրճատ ու աղճատ:

Բայց Տպագրի բնագիրն ունի մի բարեբախտ առավելություն: Նրա կազմողն Ազուլեցու ինքնաձեռագիրը տրամադրության տակ ունեցել է տասնյակ տարիներ առաջ, երբ «Դավտարի» թեր-

¹⁹ «Աղղագրական հանդես», XI, 272: Ընդդժումներն իմն են:

²⁰ Լ և ո, հոջ. կապիտալ, Ա, 68:

թերի եզրերն ու անկյունները շատ մաշված չէին, ուստի մի քանի հատվածում զեռ կարգացվում էին բառեր, որոնք հիմա պակասում են «Օրագրության» իսկագրում: Այս հանգամանքն ու մի քանի հաջող վերծանություններ որոշ արժողություն են տալիս Տպագրին ձեռագրի կողքին:

VIII. Ազուլեցու «Դավտարը»: Մեր ունեցած տեղեկություններով՝ երկրի խորհրդայնացումից հետո Զաքարիայի տետրը Հայաստան բերել է Ալեքսանդր Քալանթարի ժառանգ ընկ. Լևոն Քալանթարը և հանձնել Լուսժողովատի: Որովհետև մտադրություն կա—և անհրաժեշտ է—ոչ-հեռավոր ապագայում լույս բնծայելու Ազուլեցու «Օրագրության» լուսատիպ հրատարակությունը, որտեղ տրվելու է «Դավտարի» ձեռագրական սպառիչ նկարագրությունը, ուստի այստեղ բավականանք մի քանի կետերի հակիրճ հիշատակությամբ:

Ազուլեցու «Օրագրության» ձեռագիրը վրան համար շունի, որովհետև ոչ մի ձեռագրատան, մատենադարանի և կամ թանգարանի մատչանում չի գրանցված ու համարագրված: «Դավտարն» ութնամյա մի անկազմ տետր է թղթյա, որ հնում բաղկացած է եղել 98 թերթից: Համարագրված են ոչ թե երեսները, այլ թերթերը, 2-ից մինչև 19, 21-ից մինչև 79 և 82-ից մինչև 98: Պակասում է չորս թերթ՝ IԴԿ, 20ԴԿ, 80ԴԿ և 81ԴԿ: Մաշված են հատկապես վերջին թերթերի եզրերն ու անկյունները: Համարագրված էջերից դատարկ են միմիայն 40Դ և 40Վ երեսները: Մնացած էջերում եղել են բազմաթիվ դատարկ տեղեր, որ հետագայում օգտագործել են զանազան հավելագրողներ: Համեմատարար մոտ ժամանակներում տետրին սկզբից միացրել են 4 թերթ ուրիշ թղթից՝ առանց համարագրության: Այս թերթերը պայմանաբար անվանում եմ I, II, III ու IV թերթ: Սրանցից մնացել են դատարկ IV, IIԴԿ, IIIՎ ու IVԴԿ էջերը: Ձեռագիրը նկարներ ու զարդադրեր չունի: Զկան հեղինակի կամ թե ստացողների առանձին հիշատակագրություններ էլ: Ձեռագիրը գրված է 1664—1691 թվականին Ազուլիսում:

Գրությունը միասլուն է, սև թանաքով, շղագիր, որ ընդհանրապես հեշտ է կարգացվում: «Օրագրության» ձեռագրագիրը միատեսակ չէ, այլ տարիների ընթացքում փոփոխության է ենթարկվել, այնպես որ «Դավտարի» առաջին տարիների ձեռագրագիրը որոշակի զանազանվում է միջին ու վերջին տարիների ձեռագրագրից: Այսպես լինելով հանգերձ՝ «Դավտարը» զրոգի ձեռքն ամբողջ «Օրագրության» մեջ միշտ տարբերվում է հետագայում ուրիշների կողմից արված հավելագրությունների բոլոր ձեռագրագրերից:

«Օրագրության» այս տետրն արտագրություն չի, այլ հենց Զաքարիա Ազուլեցու ինքնա-ձեռագիրը: Սրա ապացույցներն են նախ՝ գրության էվոլյուցիան տասնամյակների ընթացքում, երկրորդ՝ միևնույն էջում նույնիսկ երեք տարբեր ժամանակաշրջանի ձեռագրագրերով հատվածների գոյությունը կողք կողքի, որ նշում է, թե հեղինակն ինքն է միևնույն էջի վրա զանազան տարիներում հավելումներ արել հաջորդաբար, ու վերջապես երրորդ՝ տողերի մեջ ու լուսանցքներում «Դավտարը» զրոգի ձեռով արված բազմաթիվ լրացումները դարձյալ տարբեր ժամանակ: «Դավտարի» ինքնաձեռագիր լինելու հանգամանքն, ի՞նչ խոսք, անշափ բարձրացնում է նրա արժողությունն ու արժեքն ամեն տեսակետից:

Ազուլեցու «Օրագրությունից» արտագրած ձեռագրեր մինչև հիմա չեն հայտնաբերված: Հավանական է, որ անցյալում այսպիսի արտագրություններ սկի չեն էլ եղել: Դարերը զեռ հասունացած չէին «Դավտարի» «շահավոր» լինելը հասկանալու համար:

IX. Կողմնակի հավելագրություններ: Ազուլեցու «Դավտարը» բացի «Օրագրությունից», պարունակում է ուրիշների ձեռքով հետագայում արված բազմաթիվ կողմնակի հավելագրություններ թե՛ կցված թերթերի ու թե՛ բուն ձեռագրի թերթերի վրա: Սա ավելորդ եմ համարել այս հրատարակության մեջ ամեն անգամ նշել, թե որ հավելագրության ձեռագրագիրն է նմանվում այս-ինչ հավելագրության ձեռագրագրին, քանի որ միմիայն լուսատիպը կարող է աշկարահանել այս նմանությունները և այսպիսով կովան տալ հավելագրություններն ուսումնասիրողին՝ նոր եզրակացություններ անելու համար: «Դավտարին» հետո կցված թերթերի հավելագրությունները մեջ եմ բերել հունարենի փոքրատառերով համարագրած, իսկ բուն «Օրագրության» թերթերի վրա արված հավելագրությունները՝ նախ լատիներենի մեծատառերով և հետո

21 Կրետացին, ինչպես հենց ինքն է պատմում, երկու անգամ եղել է Ազուլիսում. մեկ՝ 1735 թվականի վերջերին, նազր-շահի թագադրության առթիվ Մուզան գնալիս, մեկ էլ՝ 1736 թվականի դարնանը, վերադարձին: Տես Արրահամ Կրետացի «Պատմագրություն», Վաղարշապատ, 1870, գլ. իբ, խբ, էջ 29 ու 77:

փոքրատառերով համարագրած: Հավելագրությունների մեջ, որոնց մի մասը գրված է բարբառով, կան որոշ կարևորություն ունեցողները, օրինակ, Աբրահամ (հավանորեն Կրետացի) կաթողիկոսին վերաբերող Յ հավելագրությունը²¹, խաչատուր Քալանթարյանի 1860 թվականի Կ հավելագրությունը, ումի՛ր=1779 թվականի երկրաշարժը հիշատակող Ը հավելագրությունը, և այլն: Բայց հատկապես ուշադրավ են այն հավելագրությունները, որոնք դրամահաշիվներ են պարունակում: Սրանց մեջ պատահում են բաջաղլու, ըսեալ, ուղլուզ (=յուղլուզ) դրամանունները: Հաշիվները մեծ մասամբ պարսկական փողով են. հայերեն զ տառին նմանվող նշանը, որ շփոթություն առաջ չբերելու դիտումով նշանակել են լատինական յ տառով, պարսկական թումանի նշանն է. նրանից հետո գրված հայատառ թվերը պարսկական դիան են ցույց տալիս: Ահա մի քանի օրինակ զների պատմության համար տեղեկություններ պարունակող Ա հավելագրությունից, որը վերաբերում է ԽԵԻՐ=1779 թվականին:

ա ձի էմ տվել . . աչ եռ [1 ձի, գինն է 1 թուման 5060 դիան. այն ժամանակվա կուրսով=15 ուրլիխ],

զ շարէք թէլ . . բչ բոեն [3 շարեր թիլ, գինը 2 թուման 2500 դիան=20 ո. 50 կ.],

ժր լիդիր դարի . . . բողն [12 լիտր դարի, գինը 2400 դիան=48 կուպէկ], և այլն:

Թե առաջին հայացքից աննշան թվացող այսպիսի հիշատակություններն ինչ արժողություն ունեն, այս մասին կարող է վկայել տնտեսության պատմաբանը միայն:

Մ. «Դավտարը» 1664 թվականին: Ազուլեցին 1647-ից մինչև 1664 թվականն ուղեչափություններն ու բուն օրագրության համար նյութեր է հավաքել՝ վերջիններս դրի առնելով առանձին թղթերի վրա: «Դ. ո թղթի վերայ գրած էի,— պատմում է նա,— ոմն բստուք, ոմն սխալ: Ապա ոճով [=1664] յամին... բէրի, նորոգեցի յայսմ դավթարս»: («Օրագրություն», էջ 6): Սրանից երևում է, որ Ջաբարիան ոչ թե նորոգել, արտագրել է առաջներում հեղինակածը, այլ հենց 1664-ին է հին նյութերը քննության բովից անցկացնելով շարադրել սկսել յուր աշխատությունը՝ դրի առնելով մի հատուկ տետրի մեջ: Մերիշ խոսքով ասած՝ Ջաբարիա Ազուլեցու «Օրագրության», իրրև ամբողջական երկի, ծնունդը պետք է հաշվել 1664 թվականից:

«Դավտարի» վերլուծությունը երևան է հանում Օրագրողի՝ 1664-ին ունեցած գրական ծրագիրն էլ:

Տետրի հենց առաջին երեսից նա սկսում է շարադրել յուր անցած գծերի ուղեչափությունները՝ հասցնելով մինչև 21ր էջը ներառյալ: (Թարվեղ—Մարաղա ուղեչափությունը, որ գրված է 22Վ—33ր էջերում, 1664 թվականին չէր կարող դեռ գրանցված լինել, որովհետև Ազուլեցին Մարաղա գնացել է 1677-ին, և ուրիմն այս գծի ուղեչափությունը միմիայն 12—13 տարի հետո կարող էր մտցնել յուր տետրի մեջ): Հետագա ուղեչափությունների համար նա տեղ է թողնում 22Վ-ից մինչև 40Վ էջը ներառյալ: Մի փոքրիկ առաջաբան ղենելով 41ր էջում՝ նա 41Վ երեսից սկսած շարադրում է բուն օրագրությունը թվական առ թվական՝ յուրաքանչյուր տարուն հատկացնելով «Դավտարի» դույզ հանդիսակաց էջերը, առաջ ձախ ու հետո էլ աջ էջը: 18 տարվա, այսինքն 1647-ից մինչև 1664 թվականի օրագրությունը շարադրելով՝ նա հասնում է «Դավտարի» 58Վ ու 59ր էջերը: Բուն օրագրության մասը գալիք տարիներում շարունակելու համար նա դատարկ տեղ է թողնում 76 էջ, այսինքն 59Վ էջից մինչև 97ր ներառյալ: Վերջապես տետրի միմիայն վերջին երեք էջը—97Վ ու 98ր—նա հատկացնում է ընտանեկան ժամանակագրությանը, որտեղ գրանցում է նախ եղբոր ընտանիքի, հետո յուր ընտանիքի ու ամենավերջում էլ Քրդունց գերդաստանի ամուսնությունները, ծնունդներն ու մահերը:

Այսպիսով Ազուլեցու աշխատության 1664 թվականի սխեման բոլորովին պարզ է. I բաժին՝ ուղեչափություններ, II բաժին՝ բուն օրագրություն ու III բաժին՝ ընտանեկան ժամանակագրություն: Նույնքան որոշ է «Դավտարի» նույն թվականին ունեցած պատկերն էլ, որ այս է:

1ր—21ր. Ուղեչափություններ
(21Վ—40Վ. դատարկ էջեր)
41ր—59ր. Օրագրություն 1647—1664 թթ..
(59Վ—97ր. դատարկ էջեր)
97Վ—98Վ. Ընտանեկան ժամանակագրություն:

Մ. «Դավտար» 1681—1691 թվականներին: Եթե Ջաբարիայի տետրը մեծ լիներ, ապա օրագրողը մեկ ժառանգություն թողած կլիներ նույն կանոնավոր կարգով դրի առնված մի ամբողջական երկ, որի մասերը տեղաշարժելու կարիք չէր զգացվի: Բայց Ազուլեցու «Դավտարը» փոքր էր: Սրան ավելանում էր երկու ընթացատեսված հանդամանք: Առաջին. Ջաբարիան 1664

թվականից հետո, Քարվեղ-Մարաղա գիծը չհաշված, այլևս նոր գծերով ճանապարհորդություններ չէր անում, և ուրեմն կարիք չէր լինում նոր ուղեշափություններ դրանցելու: Երկրորդ ու ավելի կարևորը, բանի գնում էր, որագործը հասունանալով ավելի բազմազան ու ավելի շատ փաստեր էր ընդգրկում մի տարվա շրջանակներում և ավելի ընդարձակ գրի առնում: Ուստի դատարկ թողած այն 76 էջը, որ դրանցման հին չափացույցով (տարին երկու էջ) պիտի բավեր 38 տարվա համար, հագիվ բավականացրեց 12 տարի, այն է՝ 1665-ից մինչև 1676: Այս թվականից Ազուլեցին այլ ևս տեղ չունեի նոր պատահած անցքերը բուն օրագրության բաժնում գրելու: Միակ էլքը մնում էր շարունակությունը փոխադրել տետրի բաց մնացած ուրիշ էջեր, որպիսիք կալին ուղեշափությունների բաժնում միայն. վերջին (Քարվեղ—Մարաղա գծի) ուղեշափությունը գրանցելուց հետո այս բաժնում դեռ դատարկ էին մնացել 23ր—40ր էջերը, այսինքն 36 էրես: Եվ Զաքարիան իրոր վերադառնում է այստեղ և օրագրությունը շարունակում 23ր—37ր էջերում՝ հասցնելով մինչև 1681 թվականը ներառյալ: 1674 թվականին Ազուլեցին «Դավտարում» սկսել էր մի նոր գլուխ՝ 37ր էջից սկսվող այս գլխում նա երկու մեծ հատվածով տրվել է յուր ու երրորդ գործերի ու հարաբերությունների համառոտ պատմությունը՝ գրությունը հասցնելով մինչև 39ր էջը, որին հաջորդում է միակ թերթը, որ դատարկ է մնացել օրագրողի կենդանության ժամանակ—40ր: Զաքարիան վերջացնելով 1681 թվականի անցքերի գրանցումը՝ միաժամանակ հենց նույն տարում փակում է յուր ու երրորդ գործերին ու հարաբերություններին նվիրված դարդոտ ավարտարանությունն էլ, Վշտարեկ սրտով նա վերջ է դնում օրագրությանը, որ պահել էր 1647-ից մինչև 1681-ը 35 տարի անընդհատ, և լուծում մխրտալով: Մնացած 10 տարվա ընթացքում (1682—1691) նա լուկ հատ ու կենտ գրանցումներ է անում ընտանեկան ժամանակագրության բաժնում և հազվադեպ, փոքրիկ լրացումներ առանձին անցքերի վերաբերմամբ՝ օրագրության բաժնում:

Այսպիսով ուրեմն վերջին տասնամյակում, 1681—1691 թվականներին, երբ Զաքարիան փաստորեն ավարտել էր արդեն յուր աշխատությունը, «Դավտարն» ուներ հետևյալ պատկերը.

№ 1 հատված. 1ր—23ր. Ուղեշափություններ,

№ 2 » 23ր—37ր. Օրագրություն 1676—1681 թթ.

№ 3 » 37ր—39ր. Ավարտաբանություն,

(40ր դատարկ էջեր)

№ 4 » 41ր—97ր. Օրագրություն 1647—1676 թթ. ու

№ 5 » 97ր—98ր. Ընտանեկան ժամանակագրություն:

XII. Նոր կարգի խոտորումներ: Հիշյալ խոտորումները հեշտ հաղթահարելի խոչընդոտներն էին. բավական էր վերևի հատվածները դասավորել № 1, № 4, № 2, № 3 ու № 5 հաջորդականությամբ, որ Ազուլեցու «Օրագրությունը» ներկայանար կարգավորված կերպարանքով: Բայց Ազուլեցու «Դավտարի» խառնակ վիճակը միմիայն վերևի խոտորումներով չեն պայմանավորված: Բանն այն է, որ առանձին տարիների համար որոշած էջերն էլ են նեղ դուրս եկել նույն տարիների համար, որի հետևանքով Զաքարիան ստիպված է եղել մի տարուն վերաբերող գրանցումներ կատարել մի ուրիշ տարվա օրագրության դատարկ մնացած տեղերում, երբեմն էլ հենց միևնույն տարվա արդեն դրած հատվածների տարանջամբ՝ մեջընդմեջ խախտելով ժամանակաբանության կանոնավոր հաջորդականությունը: Այսպես, օրինակ, մինչդեռ 1647 թվականի օրագրությունը զետեղված է 41ր—42ր էջերում, և 1664-ինը՝ 58ր—59ր երեսներում անընդհատ,—1681 թվականի օրագրությունը զետեղված է նախ 35ր, ապա 37ր, հետո էլի 35ր ու վերջում էլ 30ր երեսներում, իսկ 1676-ինը՝ առաջ 97ր էջում խառը դասավորությամբ, ապա 96ր, հետո 88ր, վերջում էլ 23ր, 26ր, 27ր ու 25ր էջերում: Այս բոլորի վրա ավելանում են երեք տասնյակից դերազանցող հավելագրությունները, որոնք փռված են ձևագրով մեկի Ամբողջ վերոգրյալի մի փոքրիկ ու ակնառու նկարագրումն է, օրինակ, 41ր էջը, որտեղ նախ դրված է § 2-ը, որ 1647 թվականի օրագրության մի հատվածն է, հետո՝ S հավելագրությունը, վերջում էլ § 120-ը, որ արդեն 1662 թվականի ու հետագա անցքերին է վերաբերում:

Ինչպես տեսնում ենք, այս խառնակ ու ցրվի գրանցումը որևէ պատմական կամ թե գրական նկատառումից չի բխում. նրա պատճառը մեկ լայն է միայն—բաժնի, տարվա ու դեպքի համար պահանջված դատարկ տեղի առկայությունը տետրի որևէ մասում:

XIII. «Դավտարն», ինչպես ուր կա: Ազուլեցու «Օրագրության» տետրի բազմահանգույց խճճման լրիվ պատկերը տալիս է հետևյալ ցանկը, որտեղ էջերը նշում են ձևագրի երեսները հաջորդաբար, §§-ը՝ այս հրատարակության համարագրած հատվածները, բազմակետները՝ թափած թերթեր, իսկ օտարազգի տառերը պլյուսներով՝ կողմնակի հավելագրությունները:

Էջեր	§§	Հավել.	Էջեր	§§	Հավել.	Էջեր	§§	Հավել.
Ir		+a	"	114		40r		+L
Iv—2v		դատարկ	27v	"		"		+M
IIIr		+β	"	116		40v		+N
IIIv—IVr		դատարկ	"	115		"		+O
1rv			28r	118		"		+P
2r		+A	28v	117		"		+Q
"	1		29r	"		"		+R
2v	"		"		+J	"	127	
3r	"		"		+K	41r	2	
"		+B	29v	121		"		--S
"		+C	"	131		"	120	
"		+D	30r	"		41v—44v	3	
3v—13r	"		"	138		45r	"	+T
13v	"		"	133		45r		
"		+E	30v	"		45v—46v	4	
14r—15v	"		"	147		46v	"	
16r	"		31r	126		"	6	
"		+F	31r	122		"	5	
"		+G	"	128		47r	7	
"	"		31v	"		"	9	
16v—19r	1		32r	143		"	8	
19v	"		32v	131		47v	10	
"			"	124		"	12	
"		+H	"	127		"	11	
20rv		+I	33r	"		48rv	13	
21r—22v	"		33v	132		49r	"	
23r	"		"	134		"		--U
"	102		34r	136		49v	14	
"	100		"	135		"	16	
23v	105		"	133		50r	"	
"	111		34v	137		"	15	
"	106		"	129		50v	17	
24r	"		35r	138		51r	"	
"	108		35v	"		"		+V
24v	107		"	144		51v	"	
"	109		"	146		52r	"	
"	112		36r	140		"		+W
"	110		36v	142		52v	"	
25r	101		"	139		53r	"	
25v	113		"	141		"	88	
26r	113		35r	"		53v—55v	18	
26v	103		"	145		56r	"	
27r	"		37v—39v	148		"	20	

Էջեր	§§	Հավել.	Էջեր	§§	Հավել.	Էջեր	§§	Հավել.
“	19		“	50		“	80	
“	22		71v—73r	42		“	91	
56v	21		73v	“		90v—91r	65	
“		+X	“		+Z	91v	67	
57r	“		“		+a	92r	“	
“	24		“		+b	“	69	
“		+Y	“		+c	“	68	
57v	23		74r	49		92v	72	
58r	“		“	51		“	74	
58r—59r	25		“		+d	“	76	
59v—61v	26		74v	53		“	78	
62r	“		74v	47		93r	73	
“	30		75r	54		“	81	
“	28		75v—77v	52		93v	79	
62v	27		78r	“		94r	77	
“	29		“		+e	“	82	
63rv	31		78v	55		94v	“	
64r	“		79r	“		95r	84	
“	40		“	57		“	83	
64v	33		“	56		“	85	
“	32		79v—80v	58		“	87	
“	34		81rv	“		95v	89	
“	39		82rv	“		“	93	
65rv	35		83r—85v	“		96r	86	
66r	“		85v—86r	75		96v	“	
“	37		86v	60		“	90	
66v	36		87r	62		“	98	
“	38		87v	59		97r	95	
67r	“		“	61		“	97	
67v	41		88r	“		“	104	
68rv	43		“	99		“	94	
69r	45		88v	63		“	92	
69v	“		89r	70		“	96	
70r	44		89v	64		97v	150	
“	46		“	71		98r	151	
70v	48		90r	66		98v	149	
71r	“							

XIV. Այս հրատարակության բնագիրը: X դրվագում մենք տեսանք, թե Ագուլեցին գրական ինչ ծրագիր էր առաջադրել 1664 թվականին: XI դրվագն էլ յուր հերթին ցույց տվեց, թե «Դավ-տարը» նյութի դասավորման տեսակետից ինչ պատկեր էր ստացել 1681—1691 թվականներին: Զաքարիայի «Օրագրության» նոր բնագիր կազմելու աշխատանքը պետք է հենց այստեղից սկսվեր. «Դավտարի» 1682—1691 թվականներին պարունակած հինգ մեծ հատվածը պետք էր

վերադասավորել օրագրողի՝ 1664-ին նպատակադրած սխեմայի համաձայն: Ես հենց այսպես էլ արել եմ, և հետևանքը եղել է նյութի այսպիսի վերախմբումը.

17—237. Առաջին բաժին. Ուղեշարություններ (XI դրվագի N 1-ը),

417—977	}	Երկրորդ բաժին օրագրություն	{	»	»	N 4-ը),
237—377				»	»	N 2-ը),

377—397	}	Երրորդ } Ավարտաբանություն	(	»	»	N 3-ը),
977—987				բաժին	Ընա. ժամանակագրություն	(

Սրանով Զաքարիայի խառնակ «Դավտարն» արդեն ստանում էր շատ ավելի հստակ մի էություն:

Դալով բաժինների նյութի ներքին դասավորմանը, պետք է ասեմ հետևյալը: Առաջին բաժնում տեղադրվելու ոչ մի կարիք չի եղել: Երրորդ բաժնում, ընտանեկան ժամանակագրության մեջ, Զաքարիան նախ տվել էր եղբոր՝ Սիմոնի ընտանիքի, հետո յուր ընտանիքի ու վերջում էլ Քրդունց գերդաստանի ժամանակագրությունը. այստեղ ես մի քիչ փոխել եմ կարգը՝ դասավորելով սերնդե-սերունդ, առաջ Քրդունց գերդաստանինը, ապա Սիմոնինը, որ մեծ եղբայրն էր, հետո էլ Զաքարիայինը, որ փոքրն էր: Ամենից դժվարը երկրորդ բաժին—բուն օրագրության—նյութի դասավորումն էր. այստեղ արդեն ես հետևել եմ զուտ ժամանակաբանական հաջորդականությանը, որ հենց օրագրողի նպատակադրումն է եղել սկզբից: Քիչ անգամ, այն էլ առանձին անցքերի վերաբերմամբ, անձեռնմխելի եմ թողել «Դավտարում» առկա հաջորդականությունը՝ շարադրանքի կապը չխախտելու դիտումով:

Միևնույն նյութին վերաբերող որևէ առաջին լրացում, որ հեղինակն արել է հետին թվով ու արդեն փոխված ձեռագրերով, նշել եմ մեկ աստղանիշով ու շարվածքը մի քիչ հետ քաշելով: Երկրորդ հերթի նույնպիսի լրացումները դրված են երկու աստղանիշով ու շարվածքը կրկնակի ներս քաշած: Պետք է զգուշացնեմ սակայն, որ մի աստղանիշ կրող տարբեր հատվածների միջև գրանցման ոչ մի ժամանակակցություն չկա. այս չկա երկու աստղանիշով կտորների միջև էլ: Աստղանիշները լոկ այն են ցույց տալիս անորոշ կերպով, որ Զաքարիան լրացումն արել է աստղանշակիր պարբերությունից առաջ դրած հատվածի տարեթվից ու ամսամվից շատ հետո, և ուրիշ ոչինչ:

XV. Լրացուցիչ տեղեկություններ: Ազուլեցու երկի ամբողջ նյութը բաժանել եմ պարագրաֆների (§§), որոնց նշանակությունը միմիայն բնագրաբանական է և տրամաբանական քաժանման, ըստ էության տրոհման հետ ոչ մի կապ չունի: Տվյալ պարագրաֆը ցույց է տալիս, թե շարադրանքի ժամանակաբանական անշնդհատությունը մինչև որտեղ է հասնում. նոր պարագրաֆ դրվել է այն դեպքում միայն, երբ շարադրանքն ընդհատվել է ժամանակաբանական մի այլ շղթայի օղակով: Պարագրաֆներն անհրաժեշտ էին լոկ նշելու համար, թե այս հրատարակության որ հատվածը Զաքարիայի տետրի որ էջից է վերցրած: «Դավտարի» էջերը դրված են §§-ի հանդիպակաց լուսանցքում: Միևնույն էջից քաղած ու ժամանակաբանական միևնույն շղթային պատկանող հատվածների դիմաց, երբ լինում է նշանակված, այս ցույց է տալիս, որ տետրի տվյալ էջում նրանց առկա հաջորդականությունը չի համապատասխանում ժամանակաբանության կարգին, և ես նույն իսկ այսպիսի դեպքերում հարկադրված եմ եղել տեղափոխություն կատարելու: Պարագրաֆների հերթականությամբ կազմված մի առանձին ցանկ տալն այստեղ ավելորդ կլիներ, բանի որ նրանց հերթականությունն արդեն տրված է այս հրատարակության էջերի ձախ լուսանցքներում:

Բնագրի վերլուծման ժամանակ ամեն կերպ աշխատել եմ հարազատ մնալ սկզբնագրին: Նույն իսկ քանակական թվանուններ, որ Ազուլեցին ընդհանրապես տալիս է հայ տառերով, չեմ գրել բառերով՝ վախենալով, որ կարող է իսկապես լեզվին խորթ ու կեղծ վերծանություն ստացվել: Երբ Քալանթարի Տպագրից վերցրել եմ բառեր, որոնք չկան հիմնկվա «Դավտարում»՝ սրամաշվելու հետևանքով, բայց ժամանակին եղել են, և Տպագրի բնագիր կաղմողը տեսել, կարողացել է, ապա տողատակի ծանոթագրություններում միշտ նշել եմ այս աղբյուրը Տպագրի անունով, այլ և սրա համապատասխան էջը: Տպագիրը հիշել եմ նաև այն դեպքերում, երբ նա ընթերցվածների ուշադրավ փոփոխակներ է տվել:

Զաքարիայի ուղղագրությունը պահել եմ անփոփոխ՝ դիտակցելով, թե այսպես կոչված տառասխալներն ինչ մեծ նշանակություն ունեն տվյալ բնագրի լեզվաբանական ուսումնասիրության տեսակետից: Այստեղ թույլ եմ տվել լոկ մի շեղում՝ հատուկ անունները մեծատառով գրելով: Բանասերներին ու լեզվաբաններին պետք է վստահեցնեմ, որ Ազուլեցու «Օրագրու-

թյան» այս հրատարակության մեջ հին ուղղագրության կանոններին հակասող բոլոր դեպքերում բառի տվյալ դրությունը ոչ թե նոր ուղղագրության սպրդած հետքն է շարվածքի մեջ, այլ հենց այսպես էլ գրված է եղել «Գավտարում»: Կետադրությունը, որ երբեմն սահանջել է տվյալ հատվածի վերաբերյալ պատմական հատուկ սրբապատկար կատարել, ընդհանրապես իմն է: Բաժինների վերնագրերն ու այն բոլոր խոսքերը, բառերն, նշումներն առհասարակ, որոնք անվաճած են անկյունավոր փակագծերի մեջ, նույնպես իմն են:

Հավելագրությունները, որոնք սովորաբար դրվում են բնագրի տակ, այս հրատարակության մեջ առանձնացրել եմ և բոլորը մեծատառով գրել, Ազուլեցու աշխատությունից հետո, ծանոթագրություններից առաջ: Այս արված է շարվածքը հեշտացնելու և գիրքը տեխնիկապես գեղեցիկ ձևավորելու նկատառումով: Բայց որպեսզի ոչ մի թյուրիմացություն չծագի այն մասին, թե այս-ինչ հավելագրությունը «Գավտարի» տվյալ էջում որտեղ է գրված եղել, տողատակի ծանոթագրություններում նշել եմ, թե տվյալ հավելագրությունը հատկապես որ հատվածին է հաջորդում:

Մյուս հարագրությունների (ցանկերի, բառտետրի և այլոց) վերաբերյալ տեղեկությունները տրված են նրանց տողատակի ծանոթագրություններում:

1935 թ. նոյ. 12-ին.

Երևան.

МАТЕРИАЛЫ ПО ИСТОРИИ ИЗДАНИЯ КНИГ «ДНЕВНИК З. АГУЛЕЦИ» И «ИСТОРИЯ ВОЙН» А. ЕРЕВАНЦИ

Доктор филологич. наук М. Т. АВДАЛБЕГЯН

(Резюме)

В 1938 г. в издании Армянского филиала Академии наук СССР вышли в свет две книги: «Дневник Закарии Агулеци» и «История войн» Абраама Ереванци. На обеих книгах фигурирует лишь имя редактора С. Т. Аветисяна, но, по понятной причине, отсутствует имя Тадеоса Авдалбегяна, который первым оценил значение этих исторических памятников, составил их научный текст и комментарий и подготовил к печати.

Публикуемые документы, сохранившиеся в архиве Тадеоса Авдалбегяна, проливают свет на историю издания этих ценных первоисточников по средневековой истории Армении.